**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2025/6-2»**

ք. Չարենցավան «08» 10 2025 թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ռ. Հերգնյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Չարենցավան համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **9111000 (ինը միլիոն մեկ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

**5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝**

**ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին.**

**բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:**

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է **14 (տասնչորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132173015**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

______________________
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ**
**ք. Գավառ, Արծրունի եղբայրներ փողոց, բնակարան 85**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220083334692000**
**ՀՎՀՀ 08417089**
**էլ. հասցեն hergnyan.raf@mail.ru**
**հեռ. (+37493) 19-70-55**

**Տնօրեն՝ Ռ. Հերգնյան**

______________________
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Հավելված թիվ 1**
**«08» 10 2025 թ. կնքված**
**«ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2025/6-2» ծածկագրով պայմանագրի**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ դրամ**

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը, տեխնիկական բնութագիրը և առաջադրանքը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 15 | 71241200/27 | Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի Մշակույթի տան վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 7707000 | 1 | ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում |
| 17 | 71241200/29 | Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի մուտքի մոտ 30 մետր բարձրությամբ դրոշի տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | դրամ | 1404000 | 1 | ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում |

**Չափաբաժին թիվ 15՝ Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի Մշակույթի տան վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ**

| Հ/հ | Համառոտ նկարագրություն | Տեխնիկական բնութագիր և առաջադրանք |
|---|---|---|
| 1 | **Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը** | Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի Մշակույթի տան վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ |
| 2 | **Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը** | Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի 1-ին փողոց թիվ 102 Մշակույթի տան շենքը կառուցվել է 1960-1970 թվականներին: Նախորդ տարիներին իրականացվել են միայն ներքին հարդարման մասնակի աշխատանքներ: Մշակույթի տունը բաղկացած է երկու մասնաշենքերից: Առաջին մասնաշենքը ուղղանկյունաձև երկհարկանի քարե շինություն է 3324.41 քմ մակերեսով՝ կցակառույց շքամուտքով: Երկրորդ մասնաշենքը կաթսայատունն է՝ ուղղանկյունաձև, քարե, 93.84 քմ մակերեսով: Անցասրահի դիմացի պատն ամբողջ երկարությամբ նկարազարդված է նկարիչ Սիլավյանի որմնանկարով, որն անհրաժեշտություն ունի ռեստավրացիայի:<br><br>**Նախատեսվում է՝** |

| | | |
|---|---|---|
| | | • Իրականացնել ուժեղացման, վերակառուցման աշխատանքներ:<br>• Իրականացնել էլեկտրամատակարարման, էլեկտալուսավորման համակարգ:<br>• Իրականացնել ջերմագազամատակարարման և օդափոխության համակարգ:<br>• Իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ:<br>• Իրականացնել կապի համակարգ:<br>• Իրականացնել որմնանկարի ռեստավրացիա: |
| 3 | **Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ** | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ.**<br><br>- հողհատկացման հիմքեր.<br>- ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ.<br>- շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ.<br>- արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի եզրակացություն.<br>- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ).<br>նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ).<br>- հանույթ.<br>- չափագրություններ.<br>- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն):<br>Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) ապահովման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման, տարածքի բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ուղղված (ծառերի տնկարկով ուղեկցվող) նորմատիվ պահանջները:<br><br>**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝**<br>- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք.<br>- «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք.<br>- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք.<br>- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք.<br>- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ.<br>- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում: |
| 4 | **Նախագծման փուլերը** | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N 128-Ն հրամանի համաձայն.<br>Նախագծային աշխատանքների իրականացում «Նախագիծ» և ծավալատարածական «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով (այդ թվում՝ էսքիզային նախագիծ և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով): |
| 5 | **Նախագծի կազմը** | **«Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր.**<br><br>1. Ընդհանուր բացատրագիր<br>2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ)<br>3. Ճարտարապետաշինարարական մաս, ծավալահատակագծային լուծումներ, մանագրեր և հանգույցներ (այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ)<br>4. Կոնստրուկտիվ մաս, կոնստրուկտիվ լուծումներ, կոնստրուկտորական հաշվարկների |

| | | |
|---|---|---|
| | | հաշվետվություն<br>5. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)՝ էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման, էներգախնայողության համակարգեր, կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն, ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն՝ ըստ անհրաժեշտության<br>6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ (ներառյալ ծավալաթերթ՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, չորս օրինակից)<br>7. Շինարարության կազմակերպման նախագիծ<br>8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության<br>9. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության<br>10. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության<br>11. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության<br>12. Անձնագրային տվյալների ամփոփում (անձնագրի կազմում)՝ ըստ անհրաժեշտության:<br><br>**Համաձայնեցումներ**<br><br>**Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ:** |
| 6 | Այլ պահանջներ | **Փորձաքննություններ՝**<br>1. քաղաքաշինական պարզ փորձաքննության ապահովում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Պատվիրատուի կողմից:<br>2. շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում (համաձայն ՀՀ օրենսդրության՝ ըստ անհրաժեշտության): |
| 7 | Նախագծի լրամշակում | Ըստ անհրաժեշտության (**եթե պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»**), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: |

**Չափաբաժին թիվ 17՝ Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի մուտքի մոտ 30 մետր բարձրությամբ դրոշի տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման խորհրդատվական աշխատանքներ**

| Հ/հ | Համառոտ նկարագրություն | Տեխնիկական բնութագիր և առաջադրանք |
|---|---|---|
| 1 | **Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը** | Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի մուտքի մոտ 30 մետր բարձրությամբ դրոշի տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման խորհրդատվական աշխատանքներ |
| 2 | **Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը** | **Նախատեսվում է՝**<br>● Հողային հարթեցման աշխատանքներ:<br>● Մետաղական կոնստրուկցիայի մոնտաժման աշխատանքներ:<br>● Ալեաների կառուցում:<br>● Արտաքին լուսավորության անցկացում ամբողջ տարածքի շրջակայքում: |
| 3 | **Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ** | **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ.**<br><br>- հողհատկացման հիմքեր.<br>- ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ.<br>- շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ.<br>- արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի եզրակացություն.<br>- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(-ներ).<br>նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ).<br>- հանույթ.<br>- չափագրություններ. |

| | | |
|---|---|---|
| | | - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն): <br>Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) ապահովման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման, տարածքի բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ուղղված (ծառերի տնկարկով ուղեկցվող) նորմատիվ պահանջները: <br><br>**Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** <br>- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք. <br>- «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք. <br>- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք. <br>- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք. <br>- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ. <br>- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշում: |
| 4 | **Նախագծման փուլերը** | Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. N 128-Ն հրամանի համաձայն. <br>Նախագծային աշխատանքների իրականացում «Նախագիծ» և ծավալատարածական «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով (այդ թվում՝ էսքիզային նախագիծ և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով): |
| 5 | **Նախագծի կազմը** | **«Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր.** <br><br>1. Ընդհանուր բացատրագիր <br>2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) <br>3. Ճարտարապետաշինարարական մաս, ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ (այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ) <br>4. Կոնստրուկտիվ մաս, կոնստրուկտիվ լուծումներ, կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն <br>5. Ինժեներական (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)՝ էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման, էներգախնայողության համակարգեր, կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն, ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն՝ ըստ անհրաժեշտության <br>6. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ (ներառյալ ծավալաթերթ՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, չորս օրինակից) <br>7. Շինարարության կազմակերպման նախագիծ <br>8. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության <br>9. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության <br>10. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության <br>11. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության <br>12. Անձնագրային տվյալների ամփոփում (անձնագրի կազմում)՝ ըստ անհրաժեշտության: |

| | | |
|---|---|---|
| | | **Համաձայնեցումներ**<br><br>**Նախագծի համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ:** |
| 6 | Այլ պահանջներ | **Փորձաքննություններ՝**<br>1. քաղաքաշինական պարզ փորձաքննության ապահովում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Պատվիրատուի կողմից:<br>2. շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում (համաձայն ՀՀ օրենսդրության՝ ըստ անհրաժեշտության): |
| 7 | Նախագծի լրամշակում | Ըստ անհրաժեշտության **(եթե պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»)**, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: |

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132173015**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

______________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ**
**ք. Գավառ, Արծրունի եղբայրներ փողոց, բնակարան 85**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220083334692000**
**ՀՎՀՀ 08417089**
**էլ. հասցեն hergnyan.raf@mail.ru**
**հեռ. (+37493) 19-70-55**

**Տնօրեն՝ Ռ. Հերգնյան**

______________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Հավելված թիվ 2
«08» 10 2025 թ. կնքված
«ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2025/6-2» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 15 | 71241200/27 | Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի Մշակույթի տան վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 7707000 | 7707000 | 7707000 | 7707000 |
| 17 | 71241200/29 | Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի մուտքի մոտ 30 մետր բարձրությամբ դրոշի տեղադրման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1404000 | 1404000 | 1404000 | 1404000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի կատարված աշխատանքների (եթե փորձաքննության արդյունքներով տրվել է դրական եզրակացություն):

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132173015**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահզադյան**

_______________
(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ**
**ք. Գավառ, Արծրունի եղբայրներ փողոց, բնակարան 85**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220083334692000**
**ՀՎՀՀ 08417089**
**էլ. հասցեն hergnyan.raf@mail.ru**
**հեռ. (+37493) 19-70-55**

**Տնօրեն՝ Ռ. Հերգնյան**

_______________
(ստորագրությունը)
Կ.Տ